ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«07» մարտի 2019 թվականի № 51-Ա

«ՊԵՏՐՈԼՈԳ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊ ընկերության 2019թ փետրվարի 20-ի գրությունը և հաշվի առնելով Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը.

Հրամայում եմ

1. Ընդունել ի գիտություն, որ «ՊԵՏՐՈԼՈԳ» ՍՊ ընկերությունն անվանափոխվել է՝ «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊ ընկերության:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) ապահովել «ՊԵՏՐՈԼՈԳ» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում համապատասխան փոփոխությունների կատարումը.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Տիգրան Արզումանյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

3/7/2019

X

VERIFIED OCSP 07-Mar-19 18:12:59 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118